

դիտեն զնմանիսն իշրեանց ի չարիս», այն է վարձակները, որոնք «ի բարս բողից կերպարանեալք» ապականութեան թոյնը կը ծաւալէին կանանց եւ արանց սրտին մէջ (132-4, '59):

Բաւական չէ՞ր՝ որ բիւզանդացի տիկնանց ցուցամոլութեամբ շպարուած, «ժանուաւ» կամ «բաստեռամբ» կամ «գահաւորակաւ» կը շրջէին ամէն կողմ (Փաւս. 118. Ագթ. 131. Ոսկ. Թղթ. Բ, 552), եւ կեղեցի անգամ նոյն կերպով կ'երթային (Եղիշ. 174), եւ հանդիսավայրի մը կը վերածէին աղօթատեղին, թէ իրենք եւ թէ արք հոն մտնելով՝ լուացուած, օծուած, շքեղապէս զարդարուած, «որպէս թէ ի բողանոցս կազմիցիմք կամ ի թատերս խաղուց», կը բողոքէ Մանդակունին. ուր «կանայք բողից կերպարանօք կան առաջի Աստուծոյ, եւ արք՝ բողահոմանեաց», անպարկեշտ ակնարկներով իրարու, եւ «կընծաձայն բարբառոյն» իրարու ուշադրութիւն հրաւիրելով. ու զժբախտաբար ցայսօր տեւող սովորութեամբ՝ «ընդվայրած լեզուօք եւ շատխօսութեամբ» կ'անցնէին աղօթից ժամանակը (44): Մեր կ'ապշինք՝ երբ նոյն համարձակաբան հայրապետը խօսելով արանց վերոյիշեալ անբնական աղտեղութեանց մասին (աստ, 246), նոյն